

Կարեն Ա. Մաթևոսյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍ

11-րդ դարի մոռացված մեծ իշխանը*

Բանալի բառեր – Գրիգոր Ապիրատ, Գրիգոր Մագիստրոս Պահլավունի, Հովհաննես Սմբատ, Կեչառիս, Երկանուն, մեծ իշխան, արձանագրություն, կայսր, կաթողիկոս, որդի, դուստր:

Մուտք

Բագրատունյաց ժամանակաշրջանի Հայաստանի իշխանական տների պատմությունը դեռևս հանգամանորեն չի ուսումնասիրվել, այդ պատճառով մի շարք տոհմեր նույնացվել կամ արհեստականորեն կապվել են առավել հայտնի Պահլավունիների հետ: Օրինակ՝ ուսումնասիրողներն այդպես են վարվել 1010 թ. Անիի մերձակա Բագնայրի վանքը կառուցած Սմբատ Մագիստրոսի հետ՝ առանց փաստական հիմնավորման նրան թյուրիմացաբար համարելով Վահրամ Պահլավունու որդին¹:

Նույն բանը կատարվել է 11-12-րդ դդ. մեկ այլ իշխանական տան՝ Հասանյանների կամ Ապիրատյանների հետ²: Այս տոհմի առավել հայտնի ներկայացուցիչը, որն աղբյուրների մի մասում հիշատակվում է Գրիգոր Մագիստրոս, մյուսներում՝ Ապիրատ անունով ու կոչվում է «մեծ իշխան», ով կառուցել է Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին և այլն, չի նշված ո՛չ Հայոց պատմության ակադեմիական հատորյակներում (1976 և 2014 թթ. հրատ.), ո՛չ հայկական հանրագիտարաններում, իսկ առանձին ուսումնասիրություններում հաճախ շփոթվում է Պահլավունի Գրիգոր Մագիստրոսի (Բջնեցու) հետ:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.04.2015:

1 Տե՛ս **Մաթևոսեան Կ.**, Սմբատ Մագիստրոս, «Հանդէս ամսօրեայ», 2008, էջ 173-186:

2 Տե՛ս **Ալիշան Պ.**, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, **Լ. Խաչերեան**, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, Լոս Անձելըս, 1987, էջ 20, **Ռ. Մաթևոսյան**, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Եր., 1990, էջ 175 և այլն:

Թեև նախկինում մենք անդրադարձել ենք այս գործչին³, սակայն ստորև կատարում ենք մի շարք լրացումներ ու ձգբարումներ՝ մասնավորապես քննելով նաև Գրիգոր Ապիրատ երկանվան հարցը:

1. Երեք Գրիգոր Մագիստրոս

Հայոց միջնադարյան պատմության մեջ հանրահայտ անուն է Պահլավունյաց տոհմից Վասակի որդի Գրիգոր Մագիստրոսը, որը մագիստրոսության պատվաստիճան է ստացել բյուզանդական կայսրից Անիի թագավորության անկումից հետո՝ 1045 թ.: Գրիգոր Պահլավունին հայ միջնադարի ամենափայլուն դեմքերից է, ոչ միայն որպես իշխան՝ քաղաքական-ռազմական գործիչ, այլև աստվածաբան-փիլիսոփա, ուսուցիչ, գրող, բազմակողմանիորեն զարգացած անհատ, ուստի պատահական չէ, որ ժամանակին մեծ հռչակ է վայելել, իսկ հետագայում արժանացել բազմաթիվ ուսումնասիրողների ուշադրությանը:

Սակայն Գրիգոր Մագիստրոս անունով մեկ այլ գործիչ հիշվում է ավելի վաղ շրջանում: Հնագետ-վիճագրագետ Գագիկ Սարգսյանը 2002 թ. հրատարակեց Արզականի Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցող Գորգ (Գէորգ) քահանայի 1001 թ. արձանագրությունը, որտեղ Գագիկ Ա Բագրատունի թագավորի անունից հետո հիշատակվում է մեկ այլ Գրիգոր Մագիստրոս՝ «...Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻ, ԳՐԻԳՈՐԻ՝ ՀԱՅՈՑ ՄԱԳԻՍՏՈՒՍԻ...»⁴: Այս նույն գործիչն է կառուցել Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր եկեղեցին, որի արձանագրության մեջ նշվում է նաև նրա հոր անունը՝ Հասան. «...ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՈՒՍ, ՈՐԳԻ ՀԱՍԱՆԱ, ՇԻՆԷՑԻ ԶԷԿԷՂԷՑԻՍ...»⁵:

Սակայն Անիի պատմության մեջ ունեցել ենք ևս մի նույնանուն գործիչ: Անիի վիճագրությանը նվիրված «Իվան հայ վիճագրության» Հովսեփ Օրբելու կազմած առաջին պրակում հիշատակվում է միայն մեկ Գրիգոր Մագիստրոսի անուն, որը տարբեր է նախորդ երկուսից և ապրել է 13-րդ դարում⁶: Նա նշվում է նաև Բագնայրի 1233 թ. արձանագրության մեջ՝ «ի տէրության տեղոյս Գրիգորի Մագիստրոսի որդոյ Ապուղամրի»⁷:

Մեր նպատակն է սույն հոդվածում ներկայացնել Հայոց պատմության այս երեք նույնանուն գործիչներից ժամանակագրորեն առաջինին՝ Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսին:

3 Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը և նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», N 18, Եր., 2008, էջ 67-93:

4 **Սարգսյան Գ.**, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. հիմնադիր Կեչառիսի վանքի (վիճագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը», Ժողովածու 12, Եր., 2002, էջ 111:

5 **Հովսեփյան Գ.**, Խաղբակեանք կամ Պոռոշեանք Հայոց պատմության մեջ, Այթիլիսա, 1969, էջ 159:

6 Տե՛ս Իվան հայ վիճագրության, պր. Ա, կազմեց Հ. Օրբելի, Եր., 1966, էջ 17:

7 **Մարգիսեան Ն.**, Տեղագրությունք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 185: Որքան էլ տարօրինակ լինի, Գրիգոր Մագիստրոս անունով հիշատակվում է Անիի Գրիգոր Ա եպիսկոպոսը, որը 1225-ին եղբոր՝ Ղարիբ Մագիստրոսի՝ պատերազմում սպանվելուց հետո իր անվանը կցել է նրա Մագիստրոս պատվանունը, որն, իհարկե, այդ ժամանակ բյուզանդական նախկին տիտղոսի սոսկ անվանական կրկնությունն էր և ոչ իրական տիտղոսը: Այս մասին հանգամանորեն տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Անի, եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. էջմիածին, 1997, էջ 76-88:

2. Գրիգոր Մագիստրոս (Ապիրատ)

Իշխանի մասին առաջին վկայությունները պահպանվել են նրա ապրած դարաշրջանի վիմագրերում: Առաջինը Արզականի՝ վերը նշված արձանագրությունն է, որտեղ, ինչպես տեսանք, 1001 թ. Գրիգորը կոչվում է Հայոց մագիստրոս, որից կարելի է ենթադրել, թե նա այդ շրջանում Ասիի Բագրատունյաց թագավորության մեջ տվյալ բյուզանդական տիտղոսով հայտնի միակ (կամ գլխավոր) գործիչն էր: Ըստ Հ. Բարթիկյանի՝ նշված ժամանակաշրջանում մագիստրոսը բյուզանդական արքունիքի կողմից օտարերկրացիներին տրվող ամենաբարձր պատվաստիճանն էր, որը կրողը նաև ամենամյա դրամական վարձատրություն էր ստանում⁸: Արզականի արձանագրությանն անծանոթ Ն. Ալիխյանը ենթադրել է, որ Գրիգորը մագիստրոսի պատիվ ստացել է 1001 թ., երբ բյուզանդական Վասիլ Բ կայսրը (976-1025) եկել է Հայաստան⁹: Սա հավանական է, քանի որ Դավիթ Կուրապաղատի մահից հետո (1000 թ.), երբ նրա տիրույթները ժառանգած կայսրը եկավ Հայաստանի արևմտյան շրջանները, շրջակայքի մեծ ու փոքր իշխանավորները շտապեցին նրա մոտ և զանազան տիտղոսներ ու պատիվներ ստացան, որի մասին նշում է այդ դեպքերին ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարունեցի Ասողիկը¹⁰:

Երկրորդ արձանագրությունն արդեն գրված է հենց Գրիգորի անունից Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր գլխավոր եկեղեցու հարավային դռան ճակատին և հետևյալ բովանդակությունն ունի.

«ՆՁԲ (1033) Թ. ՀԱ(ՅՈՑ). Ի ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԷՏՈՒԹԵԱՆ Տ(ԵԱՌ)Ն ՍԱՐԳՍԻ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՌՈՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱ, ՇԻՆԷՑԻ ԶԷԿԷՂԷՑԻՄ՝ ԻՆՁ Ի ԲԱՐԷԽՈՍՈՒԹ(ԻԻ)Ն ԵՒ ԻՄ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՅՆ. ՈՐՔ ԸՆԹԷՈՒՆՈՅՔ ԶԻՍ ՅԱՂԱԽԹՄ ՅԻՇԷՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս ԱՂԱՉԵՄ»:

Դեռևս արձանագրության առաջին հրատարակիչներ Ղևոնդ Ալիշանը, Գարեգին Հովսեփյանը, Ներսես Ալիխյանը նկատել են, որ թվականի մեջ սխալ կա, և հաշվի առնելով տեքստում Գագիկ Ա Բագրատունի (989-1017)¹¹ թագավորի և 1019 թ. կաթողիկոսական աթոռից հրաժարված Սարգիս Ա Սևանցու անունների առկայությունը՝ առաջարկել են սկզբում նշված ՆՁԲ (1033) թվականը համարել գրչական սխալ և սրբագրել ՆԾԲ (1003)¹²:

8 Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Եր., 2002, էջ 669:

9 Տե՛ս **Ալիխյան Ն.**, Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս, «Այոս», N 9, 1945, էջ 12-13:

10 Տե՛ս **Ստեփանոս Տարունեցի Ասողիկ**, Պատմություն տիեզերական, Մատենագիրք Հայոց, հատ. ԺԵ, գիրք Բ, Եր., 2011, էջ 823:

11 Գագիկ Ա Բագրատունու մահվան թվականը հայագիտության մեջ ընդունված է 1020-ը: Կ. Յուզբաշյանը որոշ սկզբնաղբյուրների վկայակոչմամբ այն համարում է 1017-ը (**Юзбашян К.**, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с. 156-157): Այս թվագրման օգտին են խոսում նաև այլ տվյալներ: Տե՛ս **Սամուել Անեցի** և շարունակողներ, ժամանակագրություն, աշխատասիրությանը **Կ. Մաթևոսյանի**, Եր., 2014, էջ 182, 389-390 (այսուհետև՝ **Սամուել Անեցի** և շարունակողներ):

12 Տե՛ս **Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 259, **Յովսեփյան Գ.**, նշվ. աշխ., էջ 159, **Ն. Ալիխյան**, Ներսես Լամբրոնացի. («Ազգաբանություն Պահլաունեաց, Հասանեանց, Թոռնիկեանց և Հեթումեանց»), Վիեննա, 1956, էջ 374: Կարծում ենք, որ արձանագրության տեքստը թելադրվել է փորագրող վարպետին, որի ժամանակ տեղի է ունեցել 2 (Ձա) և Ծ (Շա) տառ-հնչյունների շփոթություն: Հայկական վիմագրերում նման սխալներ էլի են հանդիպում:

Այսպիսով, 1003 թ. Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսը ներկայանում է որպես Գագիկ Ա Բագրատունու ստորակա, նաև հայտնում, որ կառուցել է այդ եկեղեցին որպես բարեխոս իր, զավակների ու իր պատրոնի համար:

Երրորդ վիճագիրը, որտեղ հիշվում է Գրիգոր Մագիստրոսը, գրվել է 1042 թ. Տեկորում, արդեն նրա մահից (սպանությունից) հետո, որը, ինչպես ստորև կտեսնենք, տեղի է ունեցել 1021 թ.: Արձանագրության հեղինակը իշխանի դուստր Տիկնացտիկինն է, որը Վեստ Սարգսի կինն էր:

«ՆՂԱ (1042) ԹՎ ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ԵՍ ՏԻԿ(Ն)ԱՅՏԻԿԻՆ, ԴՈՒՍՏՐ ՔՐԳՈՐՈՅ ՄԱԳԻՍՏՂՈՒՍԻՆ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ՍԱՐԳՍԻ, ԱՐԵԻԵԼԻՑ ՎԷՍՏԻՍ, ԹՈՂԵԱԼ ԵՄ ԶՏԵԿՈՐՈՅ ԶՊԱՇԴԻՍՈՍՍ, ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱՐԵԻՇԱՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԻՄ ԾՆՈՂԱՅՍ ՀՈԳՈՅՆ...»¹³:

Ուսումնասիրողները, բացառությամբ Ն. Ալիյանի, այս արձանագրության մեջ հիշատակված Գրիգոր Մագիստրոսին նույնացրել են Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) հետ¹⁴, մինչդեռ հայտնի է, որ Պահլավունի իշխանը մագիստրոսի պատվաստիճան ստացել է ավելի ուշ՝ Անիի թագավորության անկումից հետո՝ 1045-ին: Հատկանշական է նաև, որ արձանագրության մեջ Տիկնացտիկինը նշում է, որ բարեգործություն է կատարել շահնշահի (Անիի թագավորի, տվյալ դեպքում՝ Գագիկ Բ-ի) արևշատության և իր ծնողների հոգու փրկության համար, այսինքն՝ նրա ծնողներն այդ ժամանակ արդեն մահացած էին:

Գրիգոր Մագիստրոսը հիշատակվում է նաև մատենագրական աղբյուրներում, սակայն ի տարբերություն իր ապրած ժամանակի վիճագրերի՝ Ապիրատ անունով: Նրա մասին գրող հեղինակները՝ Մատթեոս Ուռհայեցին, Մխիթար Անեցին, Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին, Նաթանայել Հավուցթառեցին, ապրել են նրանից մեկ ու կեսից մինչև երեք դար անց, երբ հայ իրականության մեջ Գրիգոր Մագիստրոս անունը նույնականացել էր համանուն Պահլավունի իշխանի հետ, ուստի, թերևս շփոթությունից խուսափելու համար, հիշատակել են իշխանի երկրորդ անունը: Իսկ այն, որ պատմիչների հիշատակությունը միևնույն մարդու մասին է, առաջին հերթին պարզվում է Մխիթար Անեցու և Մխիթար Այրիվանեցու խոսքերից, ըստ որոնց՝ Ապիրատն է կառուցել Կեչառիսը:

Գրիգոր Մագիստրոսին Ապիրատ անունով հիշատակող առաջին հեղինակը Մխիթար Անեցին է, որի Պատմությունից (ավարտվել է 1193 թ.), ցավոք, պահպանվել է միայն սկզբնամասը¹⁵: 13-րդ դարում Մխիթարի երկից օգտվել են Վարդան Արևելցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը: Հատկապես Վարդանը երբեմն առանձին հատվածներ բառացի արտագրել է Մխիթար Անեցուց և այս ճանապարհով մեզ հասցրել այդ հետաքրքրական պատմության առանձին բեկորներ: Մխիթար Անեցու Պատմությունից քաղված հենց այդպիսի մի հատվածում պահպանվել է եզակի վկայություն Ապիրատ մեծ իշխանի մասին: Հատվածը վերաբերում է Գագիկ Ա Բագրատունու մահից հետո գահը ժառանգած նրա ավագ որդու՝

13 Սարգիսեան Ն., նշվ. աշխ., էջ 207:

14 Տե՛ս Աեռ, Անի, Եր., 1963, էջ 322-327, «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, Եր., 1976, էջ 148, Юзбашян К., նշվ. աշխ., էջ 161 և այլն:

15 Տե՛ս Մխիթար Անեցի, Մատենան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Եր., 1983 (այսուհետև՝ Մխիթար Անեցի):

Հովհաննես Սմբատի (1017–1041) և վերջինիս կրտսեր եղբոր՝ Աշոտի միջև ծագած գահակալական պայքարի վերջում տեղի ունեցած մի դեպքի: 1021 թ. Պետրոս Ա կաթողիկոսի (1019–1054)¹⁶ և իշխանների միջնորդությամբ կայացած հաշտությամբ որոշվել էր, որ Հովհաննես Սմբատը պետք է թագավորի Անիում ու նրա շրջակայքում, իսկ Աշոտը՝ թագավորության մնացյալ տարածքներում, որը պատմիչները կոչում են «Դրուց աշխարհ»: Դրանից հետո կատարվել է մի միջադեպ, որի մասին հայտնում է միայն Մխիթար Անեցին, որից օգտվելով՝ Վարդան Արևելցին գրում է, որ Թալինի ստորոտում գտնվող իր գորակայանում հիվանդ ձևանալով՝ Աշոտը խաբեությամբ կանչում ու ձերբակալում է Հովհաննես Սմբատին, նրան տալիս Ապիրատ իշխանին, որ սպանի, իսկ սա հոժարակամ նրան տանում է Անի և վերադարձնում գահին, ասելով, որ չի կարող Աստծո օծյալի վրա ձեռք բարձրացնել ու նրա տեղը դնել մի խելագարի. «Նոյն այրն (Մխիթար Անեցին–Կ. Մ.) ասէ և յաղագս թագաւորին Յովաննիսի, եթէ եղբայր նորա Աշոտ ի յոտս Թալնայ կեղծաւորեալ որպէս հիւանդ մերձ ի մահ, կոչէ զթագաւորն առ ինքն, փորելով ի սնարիցն կուսէ որոգայթս. և այնու ըմբռնեալ՝ տայ ի ձեռս **մեծ իշխանին Ապիրատն կոչեցելոյ**, սպանանել զնա. և նա յօժար կամօք յինքն առեալ տանի դնէ յաթոռ իւր յԱնի, ասելով. Զիսորդ ձգեցից զձեռս իմ յօժեալ Տեառն, և խելագար մի եղից ի տեղուջ սորա (ընդգծումը մերն է – Կ.Մ.)»¹⁷:

Մխիթար Անեցին խոսքն անմիջապես շարունակում է՝ ներկայացնելով Ապիրատ իշխանի ծագումը և նրա՝ Կեչառիսի վանքը կառուցելու հանգամանքը. «**Զսմանէ (Ապիրատի մասին – Կ. Մ.) ասեն յաննշանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձեռացն մինչև լիներ տէր երկոտասան հազար հեծելոց, որ և շինեաց զսուրբ ուխտն Կեչառուս, որպէս Վահրամ իշխանն՝ զՍարնաշէն (ընդգծումը մերն է – Կ.Մ.)**»¹⁸:

Մխիթար Անեցի պատմիչի՝ Ապիրատ իշխանի մասին գրած «յաննշանից մեծացեալ» խոսքերն ուսումնասիրողները, որպես կանոն, վերագրել են նրա տոհմական ծագմանը: Սակայն, ինչպես ստորև կտեսնենք, այդ խոսքերը վերաբերում են նրան՝ որպես անհատի, որն իր հոր ավագ որդին ու նրա իշխանության ժառանգորդը չլինելով՝ «ոչ նշանավորներից» առաջադիմել ու հաջողության էր հասել սեփական խելքի ու առատաձեռնության շնորհիվ:

Շարունակելով՝ Մատթեոս Ոռոհայեցին գրում է, որ Ապիրատն ապաստան է գտնում Դվինի ամիրա Ապուսուարի մոտ (սա Շադդադյան Աբու-լ-Ասվար, հայկական այլ աղբյուրներում՝ Աբուլասվար անունով հայտնի

16 Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, «Պատմաբանասիրական հանդես», 2008, N 3, էջ 25:

17 **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն (գրաբար տեքստը՝ ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը **Գ. Բ. Թոսունյանի**, եր., 2001, էջ 102–103 (այսուհետև՝ **Վարդան Արևելցի**): Այս և հաջորդ մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են – Կ. Մ.:

18 **Վարդան Արևելցի**, էջ 102–103, աշխարհաբարը՝ էջ 139–140: Լ. Խաչերյանը, Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն նվիրված մենագրության մեջ Վարդան Արևելցու պատմությունից վկայաբերելով Ապիրատ իշխանի մասին ասված «յաննշանից մեծացյալ» հատվածը, այն վերագրում է Պահլավունիներին՝ գրելով, թե Ապիրատը Աբուդամրի որդիներից էր, ինչը ոչ մի հիմնավորում չունի (Վարդան Արևելցու գրքում Աբուդամր անունը ընդհանրապես չկա), տե՛ս **Խաչերյան Լ.**, նշվ. աշխ., էջ 19–20):

ամիրան է)¹⁹: Ըստ պատմիչի՝ նա սկզբում լավ է ընդունում Ապիրատին, սակայն չարախոս մարդիկ նրան զգուշացնում են, որ բազմաքանակ զորքով իր մոտ գտնվող իշխանը վտանգ է ներկայացնում, և նա դավադրաբար սպանում է Ապիրատին: Իշխանի զորավար Սարին վերցնում է Ապիրատի կնոջն ու երկու որդիներին՝ Ալլջահապին ու Վասակին, և գալիս Անի, որտեղ Հովհաննես Սմբատ թագավորը գրկաբաց է ընդունում նրանց, գավառներ ու իշխանություն շնորհում. «...և (Ապիրատը – Կ. Մ.) գնաց ի Դուին քաղաք, առ Ապուսուար գորաւարն Պարսից և երկոտասան հազար ձիաորք ընդ նմա. և Ապուսուար մեծարեալ զնա բազում աուրս: Յայնժամ մատեան առ Ապուսուար չարախօսք ոմանք և ասէն, եթէ «Այսպիսի այր յաղթող և զօրաւոր և զօրօք բազմօք եկեալ է առ քեզ, կորուստ գործէ քեզ և ամենայն տանս Տաճկաց»: Յայնժամ ռիս առեալ ամիրային ի սիրտ իւր և գաղտ յայլ զօրացն ի զրոյց սիրոյ կոչեաց զԱպիրատն և ի ծածուկ կորոյս զայնպիսի այր քաջ, հզօր և անուանի ի մէջ ամենայն աշխարհին Հայոց:

Իսկ իշխան ոմն Սարի անուն, որ էր զօրավար մեծ իշխանին Ապիրատին, առեալ զկին և զորդիս նոցա և զհեծելագունդ զօրսն և գնաց ի քաղաքն յԱնի. և թագաւորն Յովհաննէս կարի յոյժ ապաշաւէր զանիրաւ մահն Ապիրատին Հայոց իշխանին: Եւ որդեաց նորա Ալլջահապայ և Վասակայ, և Սարէ և զամենայն զօրացն տայր թագաւորն Հայոց գաւառս և զիշխանութիւնս»²⁰:

Ինչպես տեսնում ենք, Հովհաննես Սմբատը դառնորեն ողբացել է Ապիրատի անարդար մահը և իր թնի տակ առել նրա զավակներին, հետևաբար իշխանը փախել էր ոչ թե նրա, այլ Աշոտի երկյուղից: Ապիրատի սպանության՝ պատմիչի նշած դրդապատճառը, թե Շաղաղայան ամիրան իշխանին սպանում է չարախոս մարդկանց լսելով, շատ պարզունակ է թվում: Իշխանն ընտանիքի հետ Դվին մեկնելով՝ որոշ երաշխիքներ պիտի որ ունենար: Չի բացառվում, սակայն, որ Աբուլասվարը նրան սպանել է Աշոտի դրդմամբ (գուցե նրա ուղարկած մարդիկ են Ուռհայեցու մոտ դարձել «չարախօսք ոմանք»): Մի բան հստակ է, որ հետագայում նրանց հարաբերություններն այնքան են սերտացել, որ Աշոտն իր դստերը (որն իր մոր՝ Կատրամիդեի անունն էր կրում) կնության է տվել Աբուլասվարին²¹:

Մատթեոս Ուռհայեցին և Մխիթար Անեցին այս դեպքի թվականը չեն նշում: Բայց Ուռհայեցու մոտ տեղեկությունը զետեղված է մի հատվածում, ուր խոսվում է 1021 թ. տեղի ունեցած անցքերի մասին: «Թագաւորք վերջինք Բագրատունիք» բնագրի վերջում ավելացված անանուն հեղինակի փոքր ժամանակագրության մեջ արձանագրված է Ապիրատի մահվան

19 Աբուլասվար Շաղաղայանի իշխանության սկիզբը Դվինում համարվում է 1021 կամ 1022 թվականը: Փաստորեն, Ապիրատն Աբուլասվարի մոտ է գնացել նրա՝ Դվինում հաստատվելու առաջին տարում (Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Եր., 1965, էջ 209):

20 **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 16-17: Ապիրատի հետ պատահածի մասին Ուռհայեցուց օգտվելով՝ հակիրճ պատմում է նաև Սմբատ Սպարապետը (**Սմբատայ Սպարապետի** Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 6, այսուհետև՝ Սմբատ Սպարապետ):

21 Տես **Արիստակիսի Լաստիվերտցույ** Պատմություն, աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի, Եր., 1963, էջ 62 (այսուհետև՝ Արիստակես Լաստիվերտցի): 1030-ականներին այս ամուսնությունից ծնված նրանց որդին՝ Մանուչեն, Անիի տերը դարձավ 1065-ին (**Մարգարյան Ը.**, Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Եր., 1980, էջ 86):

թվականը. «ՆՀ (1021) Թուրքն եհար զԱպիրատն»²²: Այս տեղեկությունը՝ նույն թվականով, մուծված է նաև Սամվել Անեցու ժամանակագրության այն օրինակում, որը շարունակել է Ստեփանոս Օրբելյանը. «Թուրքն էհար զԱպիրատն»²³:

Հիմնականում Մխիթար Անեցուց (հնարավոր է՝ Վարդան Արևելցու պատմության միջնորդավորմամբ) օգտվելով՝ Ապիրատի մասին գրում է նաև Մխիթար Այրիվանեցին, իշխանի ձեռնարկների թիվն ավելացնելով ևս մեկով՝ Երևանում ջրանցքի շինությամբ. «Ապիրատ իշխան 12 000 հեծելի (տէր). **սա շինեաց զԿեչառուս և եհան զառուն Երևանայ**»²⁴: Այս տեղեկության հիման վրա Երևանը համարվել է Գրիգոր Ապիրատի տիրույթը²⁵:

Այսպիսով, Հասանի որդի Գրիգորը Բագրատունյաց պետության երևելի իշխաններից էր, որն առաջին անգամ մագիստրոսական պատվաստիձանով հիշատակվում է 1001 թ. և սպանվել է 1021 թվականին:

3. Գրիգոր Ապիրատ երկանունը

Այժմ անդրադառնանք Գրիգոր Մագիստրոսի հետ կապված մի տարակուսելի հարցի՝ Ապիրատ անվան ծագմանը: Ներսես Ալիհյանն այս առնչությամբ գրում է. «Անունս կարելի չէ ստուգաբանել հայերէն ապիրատ բառով: Թերևս աղաւաղուած ձևն ըլլայ **ապիպատ** պատուանունին, արտասանուած նախ **ապիրպատ**, ապա **ապիրատ**, որուն նպաստած կարող է ըլլալ ապիրատ բառը: Բայց թէ Ապիրատ ընդունած էր Բիւզանդիոնի արքունիքէն «ապիպատ» տիտղոսը, չէ վկայուած: ...Գրիգոր և Ապիրատ մէկ անձնաորութեան կրած երկանուններն են»²⁶: Խոսքը, թերևս, «ապուպատ» տիտղոսի մասին է, որը կրում էին նաև Վեստ Սարգիսն ու Վահրամ Պախլունին:

Հրաչյա Աճառյանն անվան առնչությամբ գրում է. «ԱՊԻՐԱՏ, արդյոք հայերեն ապիրատ «անարդար» բանն է. և ինչպէս կարող էր այսպիսի մի հոռի ածական մարդու անուն դառնալ: Այս անունը գործածական էր մեր մեջ ԺԱ-ԺԳ դարերում»²⁷:

Վերջերս Ապիրատ անվանն անդրադարձել է լեզվաբան Հրաչ Մարտիրոսյանը, ըստ որի **Ապիրատ** անձնանունն իսկապէս արտացոլում է գրաբարյան **ապիրատ** բառը, իսկ Գրիգոր Մագիստրոսի (Հասանի որդու)

22 Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հատ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Եր., 1956, էջ 502:

23 Սամուել Անեցի և շարունակողներ, էջ 183:

24 Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58 (այսուհետև՝ Մխիթար Այրիվանեցի):

25 Տե՛ս Հակոբյան Թ., Երևանի պատմությունը, Եր., 1969, էջ 212-213:

26 Ալիհյան Ն., Ներսես Լամբրոնացի, էջ 373:

27 Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հատ. Ա, Եր., 1942, էջ 193: Հեղինակը գրում է, որ Ապիրատ անունը հանդիպում է նաև «Վրաց մեջ»՝ վկայակոչելով Վարդան Արևելցու պատմության մի հատված, որտեղ գրված է, թե Գրիգոր Բջնեցին իր հետ վերցնում է «Վրաց Ապիրատ իշխանին» ու երկու այլ մագիստրոսների և կոթիվ մղում սելջուկների դեմ (Վարդան Արևելցի, էջ 142): Սակայն շարունակության մեջ «Վրաց իշխանի» անունը Լիպարիտ է: Սա հայտնի դեպք է, վկայված նաև այլ աղբյուրներում և վերաբերում է 1048 թ. Բասենի դաշտում տեղի ունեցած ձակատամարտին, որին բյուզանդական կողմից մասնակցում էին Կատակալոն, Ահարոն, Գրիգոր մագիստրոսները և Վրաց Լիպարիտ իշխանը («Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, Եր., 1976, էջ 449): Արևելցու պատմության հրատարակության համար հիմք ծառայած ձեռագրերում հավանորեն գրչական սխալ է սպորդել, և Լիպարիտը դարձել է Ապիրատ, հետևաբար «Վրաց մեջ» Ապիրատ անուն չկա:

պարագայում գործ ունենք Գրիգոր Ապիրատ երկանվան հետ: Վատանություն (cacophemism կամ dysphemism) օրինակներ շատ կան տարբեր լեզուներում, այդ թվում՝ հայերենում, հմմտ. Անպէտ, Ապուշ, Գեշ, Յիմար և այլ անձնանուններ: Ապիրատ անունը կարող է հարել այս խմբին²⁸: Սյուս կողմից՝ ուսումնասիրողը հնարավոր է համարում նաև **Ապիրատ** անձնանվան խնդրի լուծման մի այլընտրանքային տարբերակ: Քանի որ **ապիրատ** բառն իր հիմնական՝ «անօրեն, անարդար, անիրավ» իմաստի (ստուգաբանորեն՝ «անդատ») կողքին մատենագրության մեջ վկայված է նաև «վտարված, արտաքսված, տարագիր» իմաստով, ապա կարելի է մտածել, որ **Ապիրատ** անձնանվան հիմքում ընկած է այս իմաստը, որն իսկապես հանդիպում է անձնանուններում (հմմտ. Ղարիբ, Նժդեհ և այլն)²⁹:

Թեև նախկինում մենք հակված ենք եղել ընդունելու Ն. Ակինյանի տեսակետը, ըստ որի՝ Գրիգորի կրած տիտղոսը դարձել է նրա մականունը, իսկ հետագայում հանդես եկել որպես առանձին անձնանուն, սակայն այժմ ավելի հավանական ենք համարում ի սկզբանե Գրիգոր Ապիրատ երկանվան գոյությունը: Հայտնի չէ, թե նախկինում արդյո՞ք եղել է Ապիրատ անունը, քանի որ առաջին անգամ մատենագրության մեջ վկայվում է հենց Հասանի որդի Գրիգոր Մագիստրոսի անվան առնչությամբ:

Հարկ է նշել, որ երկանվանությունը հիշյալ ժամանակի հայ ազնվականության շրջանում շատ սովորական երևույթ էր: Անին մայրաքաղաք հռչակած Աշոտ Գ Ողորմած թագավորն Աշոտ Գագիկ երկանունն ուներ: Այդ մասին վկայող հստակ հավելում է արված Սամվել Անեցու ժամանակագրության մեջ. «Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է նոյն Աշոտ որդի Աբասայ»³⁰: Հանրահայտ է նաև Աշոտ Գ-ի թոռան՝ Հովհաննես Սմբատի երկանությունը, որի մասին հարկ է համարում ծանուցել Սամվել Անեցին՝ «Յովանէս, որ և Սմբատ, որդի Գագկայ Շահնշահի»³¹: Կարծում ենք, որ մատենագիրները նման պարզաբանումներն անհրաժեշտ էին համարում հետագայում թյուրիմացություններից խուսափելու համար, քանի որ արձանագրություններում և այլուր երկանուն ունեցող գործիչները հիմնականում հիշատակվում են կամ մեկ, կամ մյուս անունով:

Երկանվանության երևույթի տեսական վերլուծությունը գտնում ենք ժամանակի հանրահայտ գիտնական իշխանի՝ Գրիգոր Մագիստրոս Պալլադինու (Բջնեցու) «Մեկնութիւն քերականին» գործում, որտեղ նա գրում է. «Երկանուն է, որպէս անունք երկու եղեալ ի վերայ միոյ մարդոյ», ապա մի օրինակ բերելով Աստվածաշնչից՝ «Եղիազարոս Աւարան», պարզաբանում է, որ երկու անունները միշտ միասին չեն գործածվում, կարող է նշվել մեկը

28 Վատանություն շարժառիթներից մեկը եղել է նորածիններին տանող չար ոգիներին խաբելը, թե՛ սա ապիրատ՝ անօրեն՝ անպէտք երեխա է, լավը չէ, մի տար նրան մեզնից:

29 Հրաչ Մարտիրոսյանն իր տեսակետը մեզ է փոխանցել անձնական նամակագրությամբ, սակայն Ապիրատ անվան ստուգաբանությունը նա ներառելու է հայոց անձնանուններին նվիրված, առաջիկայում հրատարակվելիք ուսումնասիրության մեջ:

30 **Սամուէլ Անեցի** և շարունակողներ, էջ 175: Այս թագավորին Աշոտ-Գագիկ կամ Գագիկ է կոչում Մատթեոս Ուռհայեցին (**Մատթեոս Ուռհայեցի**, էջ 8-9): Ն. Աղոնցը Մ. Ուռհայեցու հայտնածը համարել է «խառնակ» տեղեկություն (**Աղոնց Ն.**, Երկեր, հատ. Ա, Եր., 2006, էջ 521): Սակայն վերոնշյալ տեղեկությամբ հաստատվում է Մ. Ուռհայեցու հաղորդածն այն մասին, որ Աշոտ Ողորմածը «Աշոտ Գագիկ» երկանուն է ունեցել:

31 Նույն տեղում, էջ 183:

կամ մյուսը. «...եղիագարոս, նոյն և Աւարան կարէ կոչիլ»³²: Անիի այդ շրջանի իրականության մեջ այս առումով բնորոշ է նույն Հովհաննես Սմբատի օրինակը, որը Հռոմունի վանքի 1036 թ. արձանագրության մեջ իր մասին գրում է. «ԵՍ ՍՄՊԱՏ ՇԱՀԱՆՇԱՀ ՈՐԴԻ ԳԱԳԿԱ ՇԱՀԱՆՇԱՀԻ», իսկ երկու տարի անց նույն վանքի մեկ այլ վիմագրում՝ «ԵՍ ՅՈՎԱՆՆԵՍ ՇԱՀԱՆՇԱՀ ՈՐԴԻ ԳԱԳԿԱ ՇԱՀԱՆՇԱՀԻ»³³:

Երկանուն ունեին նաև Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի ժամանակակից մի քանի Պահլավունի իշխաններ, ինչպես օրինակ՝ Գրիգոր Համզե, Վասակ Հոյոմ, Տիգրան Այլղարիբ: Այս միջավայրում բնավ տարօրինակ չէ, որ Հասանի որդին էլ Գրիգոր Ապիրատ երկանունն ունեցած լինի: Այս տեսակետի օգտին է խոսում և այն, որ նրա սերնդի ներկայացուցիչները շատ երկար ժամանակ շարունակել են կրել Գրիգոր և Ապիրատ անունները: Հետաքրքրական է, որ Գրիգոր Ապիրատի թոռանը (Վասակի որդուն) Ստեփանոս Օրբելյանը կոչում է «Շիրակյա իշխանն՝ Գրիգոր Ապիրատեան», իսկ սրա թոռանը (Հասան Մագիստրոսի որդուն), որը հիշատակվում է 1170-ական թվականներին. «Անեցին՝ Գրիգոր Ապիրատեան», քիչ անց՝ «Գրիգոր Մաժիստրոսեանց»³⁴: Բայց այս նույն իշխանին Վարդան Արևելցին կոչում է Ապիրատ անունով՝ «մեծ իշխանն Ապիրատ»³⁵, նույն կերպ է վարվում Սամվել Անեցու շարունակողը³⁶, իսկ նրա որդին՝ Անիի Սարգիս Ա Եպիսկոպոսը, բազմաթիվ արձանագրություններում իրեն կոչում է «որդի Ապիրատի»³⁷: Այսինքն՝ ակներև է, որ այս իշխանն իր նախապապի նման Գրիգոր Ապիրատ երկանուն է ունեցել³⁸:

Ներսես Շնորհալին իր հոր՝ Ապիրատի (որը հարակից տվյալներից դատելով՝ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի թոռն էր՝ Այլջահապի որդին) անվան մասին գրում է. «**Ջնախնական անուն առեալ, որ Ապիրատն էր յորջորջեալ**»³⁹ («Նախնական», այսինքն՝ նախնյաց, հայրենի)⁴⁰: Իսկ այս տոհմից սերող վերջին կաթողիկոսն էլ գրեթե բոլոր աղբյուրներում հենց Գրիգոր Ապիրատ երկանունով է հիշատակվում⁴¹:

Ինչպես վերևում տեսանք, իր ապրած ժամանակի աղբյուրներում՝ Արզականի, Կեչառիսի և Տեկորի արձանագրությաններում իշխանը կոչվում է

32 **Գրիգոր Մագիստրոս**, «Մեկնություն քերականին», Մատենագիրք Հայոց, հատ. ԺԶ, Եր., 2012, էջ 445:

33 **Սարգիսեան Ն.**, Տեղագրությունը ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 146, 166: Հետաքրքիր է, որ Հովհաննես Սմբատի վաղամեծիկ որդին էլ է ունեցել երկանուն: Արիստակես Լաստիվերոսցին թագավորի մասին գրում է. «...որդի նորա Երկաթ վաղ վախճանեցաւ» (**Արիստակես Լաստիվերոսցի**, էջ 32): Իսկ Երերույքի 1038 թ. արձանագրության մեջ թագավորի կինը գրում է. «Ես բարեպաշտ թագուիս... Սմբատ շահնշահի կինս և Աշոտոյ մարս...» (արձանագրությունը ցայժմ թերի հրատարակություններ է ունեցել): Այստեղից երևում է, որ հավանորեն, ի հիշատակ Աշոտ Բ թագավորի, Հովհաննես Սմբատի որդուն կոչել են Աշոտ Երկաթ երկանունով:

34 **Ստեփանոս Օրբելեան**, Պատմություն նահանգին Միսական, Թիֆլիս, 1910, էջ 320, 384-385:

35 **Վարդան Արևելցի**, էջ 133:

36 Տե՛ս **Սամուել Անեցի** և շարունակողներ, էջ 221:

37 Տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 75-80:

38 Իրավացի է Ն. Ալինյանը, որ իշխանին կոչում է հենց Գրիգոր Ապիրատ, թեև Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունը չի վկայակոչում (**Ալինեան Ն.**, Ներսես Լամբրոնացի, էջ 394):

39 **Ներսեսի Շնորհալոյ** Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 601:

40 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 401:

41 **Գրիգոր Զ Ապիրատ** (1194-1203), «Տէր Գրիգոր Ապիրատն ամս եօթն» (**Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 148, հմտ. **Սամուել Անեցի** և շարունակողներ, էջ 232 և այլն):

Գրիգոր Մագիստրոս: Իսկ նրան Ապիրատ անունով հիշատակող առաջին պատմիչները՝ Մատթեոս Ուռհայեցին և Մխիթար Անեցին, իրենց երկերը գրել են իշխանի մահից համապատասխանաբար շուրջ 110 և 170 տարի անց: Հնարավոր է, որ մատենագիրները նախընտրել են նրա երկրորդ՝ Ապիրատ անունը նշել, որպեսզի խուսափեն այդ ժամանակ համընդհանուր ճանաչում գտած մեկ այլ նույնանուն իշխանի՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) անվան հետ շփոթությունից:

Կարծում ենք, որ ինչպես սկզբնաղբյուրների տվյալների, այնպես էլ ուսումնասիրողների տեսակետների ներդաշնակեցման տեսանկյունից նպատակահարմար կլինի այսուհետև հիշյալ գործչին կոչել Գրիգոր Ապիրատ երկանունով: Այժմ տեսնենք, թե աղբյուրներում ինչ տեղեկություններ են պահպանվել նրա հոր և տոհմական ծագման մասին:

4. Տոհմական ծագումը

Գրիգոր Ապիրատի հոր մասին Ն. Ալինյանը գրում է. «Հասան. սա հայրն էր Ապիրատի. իր մասին աւելի բան չենք գիտեր»⁴²: Բարեբախտաբար բոլորովին վերջերս Մատենադարանի ձեռագրերից մեկում (թիվ 3681) հայտնաբերվեց Հասանի անվան մեկ այլ հիշատակություն Հավուց թառի առաջնորդ Նաթանայելի (14-րդ դ.)՝ Սամվել Անեցու ժամանակագրության մեջ կատարած հավելման շնորհիվ: Պարզվում է, որ նույն Հասանի զավակն է եղել նաև Քեղի (Գեղի) ամրոցի տեր **իշխան Գևորգը**, որը կառուցել է Հավուց թառի Կաթողիկե եկեղեցին: Մինչև այժմ Մխիթար Այրիվանեցու կարճ հաղորդմամբ հայտնի էր այդ մասին՝ «Շինի և Հաւուց թառն ի Գէորգեայ իշխանէն Քեղոյ»⁴³: Սակայն հայտնի չէր, թե ում զավակն էր Գևորգ իշխանը: Եվ ահա նույն Կաթողիկե եկեղեցու կառուցման առնչությամբ՝ 1002 թվականի դեպքերի շարքում Հավուց թառի վանահայր Նաթանայելը Գևորգ իշխանի ծագման մասին հայտնում է չափազանց արժեքավոր տեղեկություն. «**Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին...**»⁴⁴:

Գրիգոր Ապիրատի և Քեղի ամրոցի տեր Գևորգ իշխանի եղբայրներ լինելու հանգամանքի բացահայտման շնորհիվ պարզ է դառնում, որ Հասանը նույնպես իշխան էր, և որ Մխիթար Անեցու՝ Ապիրատի վերաբերյալ ասածը՝ «յաննշանից մեծացեալ», չի վերաբերում նրա տոհմական ծագմանը, այլ նրա անձին: Միաժամանակ զգալի չափով հիմնավորվում են պատմիչների հաղորդումներն այն մասին, որ Գրիգոր Ապիրատը տեր էր 12 000 հեծյալի, որը մինչև այժմ մեծ չափազանցություն էր թվում: Հասանի որդիների իշխանությունը տարածվում էր Վարաժնունիքից (Կեչառիս) մինչև Երևան, հասնում Հավուց թառի վանք ու Քեղի ամրոց, որը սահմանակից էր Դվինի ամիրայությանը: Այսպիսի տարածքի վրա իշխողները կարող էին պատկառելի զինուժ ունենալ:

Գևորգի մասին ավելացնենք, որ Նաթանայել Հավուցթառեցու հայտնա-

42 Ալինյան Ն., Ներսես Լամբրոնացի, էջ 373:

43 Մխիթար Այրիվանեցի, էջ 57:

44 Մատենադարան, ձեռ. N 3681, թերթ 78ա, Սամուել Անեցի և շարունակողներ, էջ 181:

ծի համաձայն՝ իշխանը ոչ միայն կառուցել է Հավուց թառի ինը խորանով Կաթողիկե եկեղեցին (այժմ ավերված է), այլև վանքին զգալի նվիրատվություններ կատարել, այդ թվում՝ Գողթ (Կոխթ) գյուղը, որ գնել էր Գագիկ Ա թագավորից ու նրա որդուց՝ Հովհաննես Սմբատից⁴⁵:

Նշենք, որ այս տոհմի կրտսեր ներկայացուցիչներին անդրադառնալիս պատմիչները նրանց նախնիների թվարկումը հասցնում են մինչև Հասանի անունը: Օրինակ՝ Մատթեոս Ուռհայեցին Գրիգոր Այիրատի թոռանը՝ Գրիգորին, որը պատերազմում սպանվեց ու թաղվեց Կեչառիսում, ներկայացնում է հետևյալ կերպ՝ «...քաջ զորականն և մեծ հաւատացեալսն **Գրիգոր, որդի Վասակայ, որդի Այիրատին՝ որդույ Հասանայ**, յագգէ քաջանց...»⁴⁶: Պատմիչը և նրան հետևելով՝ Սմբատ Սպարապետը նույն հետադարձ թվարկումն են անում այս Գրիգորի եղբորը՝ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսին ներկայացնելիս⁴⁷:

Քեղիի տեր Գևորգ իշխանի ժառանգների մասին մինչ այժմ ոչինչ հայտնի չէր, սակայն հոր անվան հայտնի դառնալով՝ այժմ հնարավոր է նրանց փնտրել հենց նույն տոհմական վանքում՝ Հավուց թառում: Վանքի տարածքում պահպանված հնագույն արձանագրությունը, որը խաչքարի վրա է, հետևյալ բովանդակությունն ունի. «Յիշէ Քրիստոս **զՀասան**, զորդի **Սմբատա**, զծառա քո և ողորմեա նմա, ամեն, թվ. ՇԼ (1081) էր»⁴⁸: Եթե նկատի ունենանք հայկական իշխանական տոհմերի մոտ ավագ թոռանը պապի անունով կոչելու կայուն սովորությունը⁴⁹, ապա կարող ենք ենթադրել, որ Գևորգ իշխանի որդին կրել է պապի անունը՝ Հասան, և նրա ժառանգներն են Սմբատն ու նրա որդի՝ պապի անունով կոչված Հասանը: Անուղղակիորեն այս ենթադրության օգտին է խոսում այն, որ Գրիգոր Այիրատի երկու որդիներն Այլօսահապ և Վասակ անուններն ունեին: Նա զավակներից մեկին հոր անունով Հասան չի անվանակոչվել ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ իր ավագ եղբոր՝ Գևորգի որդին (Հասանի ավագ թոռը), արդեն կրում էր այդ անունը:

Կարծում ենք, որ հենց այս՝ Հասանի որդիների ավագության հարցի համատեքստում պիտի որոնել Այիրատի մասին ասվածը, թե նա «յաննշանից մեծացեալ և վասն խելացի և առատ ձեռացն մինչև լիներ տէր երկոտասան հազար հեծելոց»: Հավանորեն նա Հասանի կրտսեր որդին էր, և մինչ Գևորգն ավագության իրավունքով ժառանգել էր հոր իշխանությունն ու Քեղի բերդը, իր որդուն էլ կոչել նրա անունով՝ Հասան, կրտսեր Գրիգոր

45 «Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Այիրատին վերըստին նորոգեց գնախաղարկան հոջակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ և շինեց զփառաւոր զիրաշալի Կաթողիկէն Թ (9) խորանաւ, և արար գանձագին զմերձակա գեղն զԿոխթ ի Գագիկ շահանշահէ և Յովանիսէ և ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք...» (Սամուէլ Անեցի և շարունակողներ, էջ 181):

46 Մատթեոս Ուռհայեցի, էջ 288:

47 Տե՛ս նույն տեղում, էջ 226, Սմբատ Սպարապետ, էջ 82:

48 Հովսեփյան Գ., Հավուց Թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձանները հայ արվեստի մեջ, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հատ. Բ, եր., 1987, էջ 17, 20:

49 Կիլիկյան հայկական ազնվական տոհմերին անդրադառնալով՝ Լ. Տեր-Պետրոսյանը գրում է. «Մեծ հոր և անդրանիկ թոռան անունների նույնությունը քարացած ավանդույթ էր հայ միջնադարյան ազնվական գերդաստաններում: Համենայն դեպս Ռուբինյան և Հեթումյան ընտանիքների ազգաբնութային այս առումով համարյա բացառություն չի ծանաչում. բոլոր այն դեպքերում, երբ հաստատված է, որ թոռն անդրանիկն է, նա անպայման կրում է պապի անունը...» (Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հատ. Բ, եր., 2007, էջ 79):

Ապիրատն իր խելքով ու ձեռներեցությամբ «ոչ նշանավորներից» կամ «փոքրերից» բարձրացել, ճանաչում էր գտել ու տեր էր դարձել բազմաքանակ հեծելագորի:

Գևորգ իշխանի և Գրիգոր Մագիստրոսի առնչության մեկ այլ վկայություն պետք է համարել Ժամանակին Հավուց թառում եղած, այժմ, ցավոք, կորած մի արձանագրություն, որն այս սկիզբն ունի՝ «Թուին ՆԿԲ (1013) ի թագաւորութեանն **Գագկայ** և ի հայրապետութեան տեսոն **Սարգսի**, ես **Գրիգոր Մագիստրոս...**»⁵⁰: Հետագա տեքստում խոսվում է եկեղեցու կառուցման և վանքին նշանավոր Ամենափրկիչ խաչի նվիրատվության մասին, իսկ ամբողջ գործը վերագրվում է Պահլավունի Գրիգոր Մագիստրոսին և անգամ որպես վանահայր հիշատակվում է նրա որդի Վահրամը (հետագայում՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոս): Իրականում, վերջինս այդ ժամանակ հավանաբար դեռ չէր էլ ծնվել (եթե նկատի ունենանք, որ մահացել է 1105 թ.), իսկ Պահլավունի իշխանը, ինչպես տեսանք, մագիստրոսության պատիվ ստացել է 1045-ին:

Այս արձանագրությանը մենք անդրադարձել ենք հանգամանալից ուսումնասիրությամբ և հանգել այն եզրակացության, որ դրա տեքստը կազմվել է ուշ շրջանում (15-րդ դար): Սակայն արձանագրության սկզբնամասը, հավանորեն, քաղվել է մի հնագույն արձանագրությունից, որտեղ նշված Գրիգոր Մագիստրոսը (1013 թ.) չէր կարող այլ մարդ լինել, քան Գևորգ իշխանի եղբայր Գրիգորը⁵¹: Ուշագրավ է նաև, որ Նաթանայել Հավուցթառեցին Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ 1013 թ. ներքո մի տեղեկություն է մուծել՝ նշելով, որ Գագիկ Ա թագավորն այդ ժամանակ Ամենափրկիչ խաչը տվել է Գևորգ իշխանին⁵²: Սա հավելյալ կռվան է ենթադրելու համար, որ այդ թվականին Հավուց թառում մի արձանագրություն է գրվել, որտեղ հիշատակվել է նաև Գևորգ իշխանի եղբոր՝ Գրիգոր Մագիստրոսի անունը (թերևս նա էլ խաչի ընծայման առիթով իր հերթին նվիրատվություններ է կատարել): Սակայն հետագայում վանքի 15-րդ դարի վանահայրերը, որոնք պարոնտեր էին ու իրենց Պահլավունյաց տոհմից էին համարում, արձանագրությունը վերախմբագրել են սեփական հայեցողությամբ ու Գրիգոր Մագիստրոսին վերագրել նույնանուն Պահլավունի իշխանի տվյալները:

Տոհմի ծագման վերաբերյալ հետաքրքրական ակնարկ է պահպանվել ուշ շրջանի մեկ այլ հեղինակի՝ Մանուել Բջնեցի եպիսկոպոսի՝ Հավուց թառի վանքին նվիրված գանձում (15-րդ դ.), որտեղ Գևորգ իշխանն անվանվում է՝ «ոստ Բագրատունի»⁵³: Եթե հավատանք սույն վկայությանը, ապա չի բացառվում, որ այս տոհմը, օրինակ, իգական գծով կապված է եղել Բագրատունիների հետ: Հետաքրքրական է, որ երբ Անիի Գագիկ Ա թագավորն ու նրա կինը՝ Կատրամիդեն, Քրիստոսի ծննդյան 1000-ամյակը նշանավորեցին

50 **Հովսեփյան Գ.**, Հավուց Թառի Ամենափրկիչը, էջ 7:

51 Տես **Մաթևոսյան Կ.**, Հավուց թառի վանքը, Եր., 2012, էջ 23-30: Վիմագիրն ավելի վաղ քննած Գ. Մաթևոսյանը եկել է այն եզրակացության, որ արձանագրության հայտնաբերման և տեղադրության հանգամանքները հնարովի են, և այն կեղծ է (**Մաթևոսյան Գ.**, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, «Լրաբեր հաս. գիտ.», 1988, N 4, էջ 68-71):

52 Տես **Մանուել Անեցի** և շարունակողներ, էջ 182:

53 Գանձ Ամենափրկիչին ի տեր Մանուել Բջնեցույ (Մատենադարան, ձեռ. 427), տես **Մաթևոսյան Կ.**, Հավուց թառի վանքը, էջ 94:

մայրաքաղաքում 1001 թվականին շքեղ եկեղեցիների կառուցմամբ (Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր և Մայր տաճար), նրանց օրինակին հետևեցին երկրի գլխավոր իշխանները, որոնց թվում առաջինները հենց Հասանյաններն էին, որ, ինչպես տեսանք, 1002-ին եկեղեցի են կառուցել Հավուց թառում (Գևորգ իշխան) և 1003-ին՝ Կեչառիսում (Գրիգոր Ապիրատ): Նրանց հաջորդեցին այլ իշխաններ՝ Սմբատ Մագիստրոսը (Բագնայր, 1010 թ.), Վահրամ Պահլավունին (Մարնաշեն, 1029 թ.)⁵⁴: Թերևս պատահական չէ նաև Գագիկ Ա-ի թանկագին նվերը Գևորգ իշխանին (Ամենափրկիչ խաչը), Գրիգոր Ապիրատի մագիստրոսության արժանանալն ու կտրուկ վերելքը նույն այս թագավորի ժամանակ, իսկ հետագայում՝ Հովհաննես Սմբատի ջերմ վերաբերմունքը նրա զավակների նկատմամբ, հանգամանքներ, որ նույնպես տոհմական մերձավորության կամ ազգակցության օգտին են խոսում:

5. Գրիգոր Ապիրատի զավակները

Համառոտակի անդրադառնանք նաև Գրիգոր Ապիրատի զավակներին, քանի որ նրանց վերաբերող տեղեկությունները զգալիորեն ամբողջացնում են նաև իշխանի կենսագրությունը: Ինչպես տեսանք Մատթեոս Ուռհայեցու վկայությունից, 1021 թ. Դվինում Գրիգոր Ապիրատի սպանությունից հետո զորավար Սարին իշխանի ընտանիքը բերեց Անի, որտեղ Հովհաննես Սմբատը ստանձնեց նրա երկու որդիների խնամակալությունը («...թագաւորն Յովհաննէս կարի յոյժ ապաշաւէր զանիրաւ մահն Ապիրատին Հայոց իշխանին: Եւ որդեաց նորա **Ապլջահապայ** և **Վասակայ**, և Սարէ և զամենայն զօրացն տայր թագաւորն Հայոց զաւառս և զիշխանութիւնս»)՝⁵⁵: Դատելով պատմիչի՝ Գրիգոր Ապիրատի զավակների անունները տալու հերթականությունից՝ Ապլջահապայն ավագն էր: Սակայն չի բացառվում, որ Մատթեոս Ուռհայեցին (կամ նրան տեղեկություն հայտնողը) սխալված լինեն: Վասակի ավագության օգտին է խոսում այն, որ նա մնացել է Անիում, մինչդեռ Ապլջահապայն այս կողմերում չի հիշատակվում: Վասակն իր ավագ որդուն հոր անունով Գրիգոր է կոչել, որի մահից հետո նրան հուղարկավորել են Կեչառիսում, այսինքն՝ տոհմական, պապական ճյուղի վանքում:

Քանի որ մեր պատմիչները կանանց անուններ տալու մեջ խիստ ժլատ են, Ուռհայեցու մոտ ևս բացակայում է Գրիգոր Ապիրատի դստեր անունը, բայց, ինչպես վերևում տեսանք, այդպիսին եղել է և 1042 թվականին էլ արձանագրություն է թողել Տեկորում: Թե որքան հոգատար է գտնվել Հովհաննես Սմբատն այս ընտանիքի նկատմամբ, կարծում ենք, երևում է հենց այս աղջկա օրինակով, որը հիշյալ արձանագրության մեջ իրեն կոչում է Վեստ Սարգսի կինը: Հայտնի է, որ Վեստ Սարգիսն այդ ժամանակ մեկն էր «ի գլխաւոր ազատացն Հայոց»⁵⁶, արքունիքում մեծ կշիռ ունեցող և թագավորին մերձավոր մարդ էր, ուստի նրա ամուսնությունը չէր կարող պատահական

54 Թեև Մարնաշենի արձանագրության մեջ նշված է 1029 թվականը, սակայն, հավանաբար, Կաթողիկե եկեղեցու կառուցումն ավելի վաղ է ավարտվել (տե՛ս **Մաթևոսյան Կ.**, Մամվել Անեցին և նրա շարունակողները մի քանի վանքերի կառուցման մասին, «Էջմիածին», 2012, Բ, էջ 10-21):

55 **Մատթեոս Ուռհայեցի**, էջ 16-17:

56 **Արիստակես Լաստիվերտցի**, էջ 57:

կերպով լինել: Միանգամայն հավանական է, որ Գրիգոր Ապիրատի դատերը, որպես նրա խնամակալ, հենց Հովհաննես Սմբատ թագավորն է Վեստ Սարգսին կնության տվել: Դրանով վերջինս ավելի է մտերմացել Հովհաննես Սմբատին: Պատահական չէ, որ թագավորի մահվան ժամանակ Վեստ Սարգսը հիշատակվում է որպես նրա հոգաբարձու⁵⁷:

Թեև ուղղակի վկայությունները բացակայում են, սակայն բնական պիտի համարել, որ Հովհաննես Սմբատը նույն հոգատարությամբ կին է ընտրել նաև Գրիգոր Ապիրատի որդիների համար: Այսպես, Գրիգոր Բջնեցու որդի՝ 1066-ից Հայոց կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի մասին Մատթեոս Ուռուհայեցին հայտնում է, որ նա, 1072 թվականին գնալով Անի, տեղի եպիսկոպոս է ձեռնադրել իր քրոջ որդի Բարսեղին, որը Ապիրատի որդի Վասակի որդին էր. «...Տէր Գրիգորիս գնացեալ ի մայրաքաղաքն Հայոց, որ կոչի Անի, և անդ ձեռնադրեաց եպիսկոպոս զԲարսեղն՝ զքեռորդին իւր՝ զորդի Վասակայ, որդւոյ Ապիրատին, որդւոյ Հասանայ»⁵⁸: Այսինքն՝ Գրիգոր Ապիրատի որդին՝ Վասակը, ամուսնացել է Անիի թագավորության մեկ այլ նշանավոր իշխանի՝ Գրիգոր Բջնեցու դուստրերից մեկի հետ: Եթե նկատի ունենաք, որ 1021 թվականից Վասակն անհայր էր մնացել և հանձնվել Հովհաննես Սմբատի խնամակալությանը, միանգամայն հավանական պիտի համարենք, որ նրա համար հարսնացուի նման շահեկան ընտրություն կատարողը նույնպես թագավորն է եղել:

Վասակն ու նրա կինն ունեցել են չորս զավակ՝ Գրիգոր, Բարսեղ, Հասան, Ապլջահապ: Սրանցից Գրիգորը Անիում գլխավոր հայ իշխանն էր Մանուչե ամիրայի ժամանակ, սեփական զորքն ունեցող քաջ զորական, նրա եղբայրը՝ 1072-ին Անիի եպիսկոպոս, իսկ 1081-ին (1105-ից միանձնյա) կաթողիկոս դարձած Բարսեղ Ա Անեցին էր: Գրիգորի՝ Հասան Սագիստրոս անունով հիշատակվող որդու զավակներն էին 12-րդ դարում հայտնի իշխան Գրիգոր Ապիրատն ու Բարսեղ Բ Անեցի եպիսկոպոսը:

Գրիգոր Ապիրատի որդի Վասակի ու Գրիգոր Բջնեցու դստեր կազմած ընտանիքի մասին խոսքն ավարտենք ևս մի դիտարկումով: Նախկինում նշել ենք, որ Հասանյան (Ապիրատյան) տոհմը Պահլավունիների հետ նույնացնող հեղինակները դրա համար սկզբնաղբյուրներից բխող հիմնավորումներ չեն ներկայացնում: Իսկ այս ամուսնության փաստն ինքնին բացառում է այդ տոհմակցությունը, քանի որ նույն տոհմի անդամների միջև ամուսնությունն արգելված էր եկեղեցական կանոններով: Այլ հարց է, որ նկատի ունենալով հենց այս ամուսնության պարագան՝ տոհմի հետագա անդամների համար պատմիչները երբեմն նշում են Պահլավունի տոհմանունը՝ հաշվի առնելով իգական գիծը (Գրիգոր Բջնեցու դստեր հանգամանքը): Սակայն հատկանշական է, որ այս տոհմի՝ Վասակի ճյուղի ներկայացուցիչները, իրենց գրած արձանագրություններում երբեք Պահլավունի չեն կոչվում:

Ցավոք, աղբյուրներում նշված չէ, թե ինչպես է ընտանիք կազմել Գրիգոր Ապիրատի մյուս որդին՝ Ապլջահապը: Ն. Ակինյանն այս առնչությամբ գրում է. «Վկայուած է, թէ Վասակի կինը Գրիգորի դուստրն է, բայց լռած է

57 Տե՛ս նույն տեղում:

58 Մատթեոս Ուռուհայեցի, էջ 226, Սմբատ Սպարապետ, էջ 82:

պատմությունը ի մասին Ապլջահապի: Մինչ Վասակ մնաց Արեւելք (Անի, Խաչէնք), Ապլջահապ կերեւայ թէ 1045-ին իր աներոջ հետ գաղթեց Միջագետք և տիրացաւ այնտեղ Ծովք ամուր բերդին»⁵⁹: Ներսես Ակինյանի այն ենթադրությունը, որ հենց Գրիգոր Այիրատի որդի Ապլջահապն է եղել Գրիգոր Բջնեցու դուստրերից մեկի ամուսինը, որից ծնվել են նրանց Այիրատ, Գրիգորիս, Վահրամ, Վասակ զավակները, միանգամայն հնարավոր է: Թեպետ հաճախ չի պատահում, որ երկու եղբայրների ամուսնացնեն երկու քույրերի հետ, բայց եթե հիշենք, որ Գրիգոր Այիրատի զավակների ապագան որոշողը Հովհաննես Սմբատն էր, չի բացառվում, որ թագավորի առաջարկով Գրիգոր Բջնեցին իր երեք դուստրերից երկուսին կնության է տվել Ապլջահապ և Վասակ եղբայրներին:

Քանի որ ուղղակի վկայություն չունենք, պետք է հաշվի առնենք հարակից տվյալները: Այս խնդրի լուծման համար էական է հիշյալ ընտանիքի անդրանիկ որդու անվանակոչությունը Այիրատ հազվագյուտ անունով: Եթե Վասակն ավագ որդուն կոչել է հոր անունով՝ Գրիգոր, հնարավոր է, որ Ապլջահապն էլ իր անդրանիկին կոչել է երկանուն ունեցող հոր մյուս անունով՝ Այիրատ: Ինչպես վերևում տեսանք, վերջինիս զավակը՝ Ներսես Շնորհալին, այդ անունը համարել է «նախնական», այսինքն՝ հայրենի:

Սակայն պետք է նշել, որ Ապլջահապ անունն այս տոհմի սերունդների մեջ այլևս չի կիրառվել: Այիրատի որդին՝ Ներսես Շնորհալին, որն այնքան սիրով է հիշատակում իր հորը, ոչ մի անգամ չի տալիս նրա հոր, այսինքն՝ իր պապի անունը: «Վիպասանություն նախնի ըստ Հոմերի սկսեալ ի վերուստ» երկում Ներսես Շնորհալին պատմում է իր տոհմի մասին, գովաբանական ռժով անդրադառնում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու գործունեությանը, նկարագրում նրա Վահրամ որդու կաթողիկոսանալը (Գրիգոր Վկայասեր), որի քրոջ թոռն էր ինքը: Շնորհալին գովաբանում է Այիրատի մայրական գծով պապին՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն, ու հիշատակում անգամ վերջինիս հորը՝ Վասակին⁶⁰: Քանի որ կաթողիկոսական իշխանությունը շարունակելու տեսակետից Ներսես Շնորհալու համար չափազանց կարևոր էր իր և ավագ եղբոր՝ Գրիգորի (Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոս) Պահլավունյաց, այսինքն՝ Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմից սերված լինելն ընդգծելը, նա հատուկ տեղ է տալիս դրան⁶¹, սակայն խոստովանում է, որ մայրական գծով են կապված Պահլավունիներին: Հայրական կողմի մոռացության մատնումը կարող էր բացատրվել հենց այդ հանգամանքով: Չի կարելի բացառել նաև ներընտանեկան ինչ-ինչ գժտությունները: Հնարավոր է, որ հետնորդների կողմից մոռացության մատնված Ապլջահապը բավական վաղ է մահացել⁶²: Նման ենթադրությո-

59 Ակինյան Ն., Ներսես Լամբրոնացի, էջ 379-380, **Կիլիսեբեան Բ.**, Ծովք (Ծովք-Տյուք և Հոռն-Կլայ), Վիեննա, 1904, էջ 10-16:

60 Տե՛ս Ներսեսի Շնորհալույ Բանք չափաւ, էջ 587-588:

61 Հատկանշական է 1166 թ. ապրիլի 17-ին Հռոմկլայում կաթողիկոսական ձեռնադրության ժամանակ Ներսես Շնորհալու արտասանած ճառի այն հատվածը, որը վերաբերում է նրա նախնիներին՝ Գրիգոր Լուսավորչից մինչև Գրիգոր Վկայասեր և Բարսեղ Անեցի (**Ներսեսի Շնորհալույ** Հայոց կաթողիկոսի թուղթք, Վենետիկ, 1873, էջ 8):

62 Եթե ենթադրենք, որ Գրիգոր Բջնեցու դստեր ամուսինը Ապլջահապը չէր, ինչն ակնարկում է Վ. Վարդանյանը («Ծովքի Պահլավունիները դարաշրջանի որոգայթներում», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, «Հայոց պատմության հարցեր», N 8, Եր., 2007, էջ 47-48), այլ մեկ ուրիշը, միննույն

յան օգտին է խոսում այն, որ նրա եղբայր Վասակն իր ամենակրտսեր որդուն (դատելով Ուռհայեցու թվարկումից) կոչել է Այլջահապ, գուցե ի հիշատակ մահացած եղբոր: Հնարավոր է, որ Այլջահապի զավակները մանուկ հասակից մնացել են մայրական պապի՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու խնամքին: Մասնավորապես նաև այդ իմաստը կարելի է տեսնել Ներսես Շնորհալու խոսքերում, որը Գրիգոր Մագիստրոս Պահլավունու՝ իր հոր՝ Ապիրատի նկատմամբ վերաբերմունքը բնութագրում է «**Հօրն մերոյ նա հայր եղեալ, ըստ մայրականն մեջնորդեալ**»⁶³ բառերով: Այսինքն՝ մայրական պապն է, որ հայրություն է արել իր հորը:

Հատկանշական է, որ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու որդին՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, նույնպես շատ կապված է եղել հատկապես իր այս քրոջ ընտանիքի ու նրա չորս զավակների հետ: Հենց նրա ցուցումով Բարսեղ Ա Անեցին (Վասակի որդին, որին, իմիջիայլոց, Ներսես Շնորհալին կոչում է իր «արենառուն», այսինքն՝ արյունակիցը)⁶⁴, իրենից հետո 1113 թ. կաթողիկոսական գահը փոխանցեց Ապիրատի որդի Գրիգորին, որն այդ ժամանակ գրեթե պատանի էր⁶⁵, ու այդ պատճառով աթոռին մնաց կես դարից ավելի (53 տարի):

Գրիգոր Գ-ից սկսած (որը, ի տարբերություն սովորաբար ծննդավայրի անունով մականվանվող մյուս կաթողիկոսների, կոչվում է տոհմաբանական Պահլավունի մականունով)՝ այս տոհմի ներկայացուցիչները հայրապետական աթոռն իրենց ձեռքում պահեցին 90 տարի, մինչև Գրիգոր Զ Ապիրատ (1194-1203): Նրանք իրենց համարում էին Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ՝ Պահլավունիներ, և բազմում կաթողիկոսական աթոռին տոհմական ժառանգականության «հիմնավորմամբ»⁶⁶:

Այսպիսով, 11-րդ դարի արշալույսին Բագրատունյաց թագավորության ազնվականության մեջ հանդես է եկել Հասանի որդի Գրիգոր Ապիրատը՝ որպես մեծ իշխան, որը 1001 թվականից հիշատակվում է մագիստրոս տիտղոսով, կառուցել է Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցին և հիմնել է ջրանցք Երևանում: Սպանվել է 1021 թ., որից հետո Հովհաննես Սմբատ թագավորի հովանավորությունը ստացած նրա որդիները, խնամիական կապ ստեղծելով Պահլավունիների հետ, ապահովել են

է, նրա անունը, փաստորեն, իր սերունդները մոռացության են մատնել, որի ստույգ պատճառն անհայտ է:

63 Ներսեսի Շնորհալույ Բանք չափաւ, էջ 587-588:

64 Տե՛ս Ներսեսի Շնորհալույ Հայոց կաթողիկոսի թուղթը, էջ 8:

65 Մատթեոս Ուռհայեցին 1113 թ. Գրիգոր Գ-ի օծման մասին գրելիս շեշտում է նրա վաղ տարիքը՝ միաժամանակ նշելով, որ նա Վասակ Պահլավունու որդի Գրիգոր Մագիստրոսի տոհմից էր. «Յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեանն Տանն Հայոց տէր Գրիգորիս որդի Ապիրատին, որ էր յազգէ Գրիգորոյ Մագիստրոսին՝ որդւոյ Վասակայ Պալիաուսոյ, վասն զի զկնի մահուանն Տեառն Բարսեղի եղև ժողով եպիսկոպոսաց և հարանց ի Կարմիր վանքն՝ մերձ ի Քեսուն գաւառ՝ և... ի ամին ատր տան զձեռնադրութիւն կաթողիկոսութեանն ի վերայ աթոռոյ սրբոյն Գրիգորի, և նստաւ ի հայրապետական աթոռն մինչ էր ի տղայութեան հասակին, վասն զի չև ևս էր լեալ սկիզբն մօրուացն» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 360-361):

66 Հաջորդաբար կաթողիկոս դարձան Ապիրատի որդի Գրիգոր Գ Պահլավունին՝ 1113-1166 թթ. և նրա եղբայր Ներսես Դ Կյայեցին (Շնորհալի)՝ 1166-1173 թթ., ապա նրանց Վասիլ եղբոր որդին՝ Գրիգոր Դ Տղան (1173-1193): Վասիլի դստեր որդին էր Գրիգոր Ե Քարավեժ (1194) կաթողիկոսը, իսկ Ջորավար եղբոր որդին էր Գրիգոր Զ Ապիրատը (1194-1203): Ջորավարի դստեր Շահանդուխտի և իշխան Օշինի որդին էր Կիլիկիայի հայտնի եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացին (1153-1198): Նրա եղբայրներից մեկը Ապիրատ անունն էր կրում: Հասանի որդի Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի տոհմի մասին այլ մանրամասներ և մեր կազմած տոհմաճառը տես **Մաթևոսյան Կ.**, Անի-Շիրակի պատմության էջեր, եր., 2010, էջ 101-137:

տոհմի երկարատև գործունեությունը և առաջնակարգ դերը 11-12-րդ դդ. հայ իրականության մեջ:

Կարեն Ա. Մաթևոսյան – Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են միջնադարյան Հայաստանի պատմությունն ու մշակույթը, որմանակարչությունը, մատենագրությունը և ձեռագրական արվեստը: Մասնավորապես, հրատարակել է Սամվել Անեցու և նրա շարունակողների Ժամանակագրությունը (Աղամից մինչև 1776 թ.), անդրադարձել Անիի պատմության հարցերին, Աղթամարի, Արուծի, Կեչառիսի, Մուղնու, Հավուց թառի և այլ միջնադարյան բնակավայրերի և վանքերի պատմությանն ու մշակույթին:

Summary

GREGORY APIRAT MAGISTROS
The Forgotten “Great Prince” of 11th Century

Karen A. Matevossian

Key words – Gregory VI Apirat, Grigor Magistros Pahlavuni, Hovhannes-Smbat, Kecharis, a double name, Grand Duke, protocol, emperor, Catholicos, son, daughter.

During the Bagratuni period the history of many of the princely houses in Armenia has not been studied in detail and are therefore artificially identified with better known Pahlavunis. Historians treated other noble houses of the 11th century Hasanyan the same way, identifying them with the Pahlavunis. The most well known representative of this family is mentioned in some sources as Gregory Magistros, in others, as Apirat. Comparative evidence shows that originally he was called by the dual name of Gregory Apirat. And the researchers often confused him with Gregory Magistros Pahlavuni.

Hassan’s son Gregory from the Bagratuni family was an eminent prince and was called by historians the “Great Prince”. The first time he is referred to as Magistros is in 1001 in Arzakan records. In 1003 he built St. Gregory Church of the Kecharis Monastery and also set up a canal in Yerevan. The prince’s brother, George who was the owner of the Keghi castle, built the church for the Havuts Tar Monastery in 1002. At a time Gregory Apirat saved the life of Hovhannes-Smbat, King of Ani, and afterwards was killed in Dvin in 1021. Despite the availability of this data, Gregory Apirat Magistros’s name is not mentioned in Armenian Academy’s 1976 and 2014 editions of history volumes, nor is it mentioned in the encyclopedias.

After his death, the prince’s children have gone under the care of the King Hovhannes-Smbat, who later married Gregory Apirat’s daughter to a famous prince named Vest Sargis. His sons, Apljahap and Vassak married the daughters

of Gregory Magistros Pahlavuni. These families gave birth to prominent clans, such as Hasanyan-Pahlavuni, whose descendants have long used the name Gregory and Apirat separately and as a dual name, Gregory Apirat.

Резюме

ГРИГОР АПИРАТ МАГИСТР
Забывтый великий князь 11-го века

Карен А. Матевосян

Ключевые слова – Григор VI Апират, Григор Магистрос Пахлавуни, Ованнес-Смбат, Кечарис, двойное имя, великий князь, протокол, император, Католикос, сын, дочь.

История армянских княжеских домов периода Багратидов пока детально не изучена, поэтому некоторые роды искусственно были связаны с более знаменитыми Пахлавуни. Исследователи поступили так с княжеским домом Гасанянов (11–12 вв). Более известный представитель этого рода в некоторых источниках упоминается как Григор Магистр, а в некоторых – Апират. Сопоставление фактов показывает, что изначально он носил двойное имя – Григор Апират. Исследователи часто путали его с Григором Магистром Пахлавуни.

Сын Гасана, Григор, был выдающимся князем царства Багратидов, историки называют его "Великим Князем". Впервые он упоминается с титулом магистра в 1001 г. (надпись Арзакана), построил церковь Св. Григор монастыря Кечарис (1003 г.), основал канал в Ереване. Братом князя был владелец замка Кехи – Геворг, который в 1002 г. построил церковь в монастыре Авуц тар. Во время одного инцидента Григор Апират спас жизнь царя Ани Ованнеса Смбата, а некоторое время спустя был убит в Двине в 1021 г.. Несмотря на наличие этих фактов, имя Григора Апирата Магистра не отмечено ни в академических томах "Истории армянского народа" (изд. в 1976 и 2014 г.г.), ни в армянских энциклопедиях.

После смерти дети Григора Апирата перешли на попечительство к Ованнесу Смбату, который отдал дочку князя замуж за князя Веста Саргиса, а сыновей – Аплджахапа и Васака, женил на дочерей Григора Магистра Пахлавуни. С этих семей берут свое начало знаменитые роды (Гасанян-Пахлавуни), в которых имели применения имена Григор и Апират, как отдельно, так и двойное имя – Григор Апират.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՅՅՈՒՆ

Ի (ԺԳ) քաղաքի, Թիվ 3 (51) հայկա-սօվետական, 2015

ՀՀԿ հասանալիական հանրապետություն